



ԳՐԱԿԱՆ . — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . — ՊԱՏՄԱԿԱՆ .
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԵՏԱԿԱՆ

1843-1896 ՀԱՏՈՐ ԵՂ ԳԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ

ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

ԿԱՄ

ՍԿԶՐԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

(Շարունակութիւն և վերջ. տես յէջ 494)

ԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԵՐԱՆԱԾ
ԹՈՅՆ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԵՐԱՅ ՓՈՐՔ
ԻՆՉ ԼՅԱՅ ԿՐ ՍԻՌԵՆ ՆԱԿ Ս. ԲԱՐՍ.
ՂԻ ԱՆԿՆԴԱԺ ՄԵՂԵԼԻՍԹԻՆԵՐԻՆ, ԳՐԱՆԻՐ
ՍԱԿԱՅԻՆ ՆՈՐԱՆՈՐ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՄ
ԱՅՂ ԿՐ ԲԵՐԵՆ: ԻՐ ԹՂԹՈՑ ՄԷՂ ԵՄԾԱԿԻ ԿՐ
յԻՀԱՄԱԿԷ ՆԱ ՓԱՆԱՍՏՈՍ ՈՐԻՆ ԵԿԻՍԽՈՒՅՈՍ,
ԳՐԱՆ ԴՂԱՑԿԱ ԵԿԻՍԽՈՒՅՈՒՄԻՆ ԶԵՆՆԱԳՐՈՒ
ԹԻՒՆ: ՍՊ ԱՆՈՒԱՐԱԿԻՅՈՍ ՄԵԺ ՀԱՅՈՑ ԵԿԻՍ.

1. ՀԱՌԱ. Ս. ԲԱՐՍԱԿԻ ԹՈՒՂԹ 58, ԱՌ ՄԻԿՐԱՍՏ
ՄԻԿՐԱՍՏ. « Դնօսքսն ծէ ԲՅՈՒՄԱԻ ղն ԵՄԼԱՅԻԱՆ
ՍՈՒ, ծէ ծ ԶԵԼՓՈՑ 'ԱՆԺՄՈՑ ՓԱԾՏՈՆ ղոն ՍՈՆՈՆՏԱ
ղՊ ՍԱՊԱ ԵՍԻՍԿՈՍՈՆ ԶԽԵՐՈՏՈՆՈՑ, ղնԺ փՂՓՈՑ ԶԵ
ԶԱՄԵՆՈՑ, ԿԱԻ ԿԱՏԱԽԵՐՈՏՈՆՈՑ ղոժ ԶԵԾՍԵՄԱՏԱՏՈՑ
ԶԶԵԼՓՈՑ ԿՐԻՂԻՂՈՒ ծոժ ԵՄԼԱՅՈՒՄԱԻ ղն

ԿՈՒՍՈՆԵՐԷՆ ՄԻՆ ԷՐ, ԹԷ Ե ԲԱՑԱՅԱՅԱ ԿԵՐ.

'Արմենիան . . . ԴղօժԱԻ ԴԱՐ ԿՈՒՂՈՒՑ ԼՈՒՂԻՍԵՆ ղն
ԱՏԱՅԻԱՆ ԿԱՅԻՂՆ. 195, ԱՌ ԹԷՆՈՒՄԱՆ ԵՐԽՈՒՄԱՆԻՐ.
« Դնօսքսն ծէ ծ ԶԵԼՓՈՑ ԶԱՅՄԱՏԱ ԵՄՈՆ ԴԽԵ ղոժ
ԴՄԱՑ ԿԱՐԱ ղոժ ՍԱՊԱ ԶԵՅՈՒՆՏԱ ԶՂՈՆ ԴԵՆՅՈՑԻԱԻ
ԵՍԻՍԿՈՍՈՆ. ԵՍԻՂԻՂ ԴԵ ԴՂՈՑԱՄԵՆ ԴՄԵԻՑ ԿԱՐՏՐԻԱՆ
ԴԻՑ ՍԻՑ ԵՄԼԱՅԻԱՑ ԿԱԻ ԴՈՆ ԼՈՒՂՈՆ ԵՍԻՍԿՈՒՄ,
ԿԱՏԱՓՐՈՆՈՑ ԴՄՈՆ ԿՐՈՑ 'ԱՆԺՄՈՆ ՓԽԵՏՈ ԿԱԻ ԿԱՐ'
ԶՂՈՒ ԼԱՅՈՆ ղն ԽԵՐՈՏՈՆԻԱՆ ԽԱՐԻՑ ԴՄԵՐԱՑ ԵՍՈՄՆԻՑ
ԵՍԱՆԴԻՑ. 515, ԱՌ ՊԱՅԻՆԵՐԱՌ ՍԱՄԱՅԱՑԻ. « ՍԱՆՏԱՑ
ԵՍԻՂԻՂԻՑ ԶԱՅՄԱՏԱ ԿԱՐԱ ԴՈՆ 'ԱՐՄԵՆԻԱՆ ԵՒ ԵՍԱՆԴԻ
ԴՂԱՆ ԶԱԻԱՆ ԵՐԱԾԵՑ ԴԻ ԴՈՆ ԵՐԱԿԱ ԶՂՈՒՑ ԴՂՆ
ԵՍԻՍԿՈՒՂՈՆ. ԵԻ ղն ԵՍՈՆ ԵՍԻՂԱԼԻԾՈՑ ԵՐԱԿԱՑ ԴՄԵՆ
ԶՂՈՒՄԱՆ ղն ՍԱՐԴՆՈՒՄՈՆ, ԵԻ ԴԵ ԶԵՐԱՐՈՒՄԱՆ ԵՍԻՂՈՆ
ԶԵՐ ՍՈՆ ԵՂԱՂՈՒ, ԶՂԼԱ ԿԱՐ' ԴՂՈՆ ԶԽՈՒՑ. ծ ղԱ ղԱՆՏԱ
ԴԵՆՅՈՒՑ 'ԱՆԺՄՈՑ . . . ԶԽԵՐՈՏՈՆՈՑ ղոն ՓԱԾՏՈՆ
ԻՂԻԱ ԶՂԵՆԻԱՑ ԿԱԻ ԻՂԻԱ ԽԵՐԻ, ՍՂԵՆՈՑ ԴՄՈՆ ԶՂԱՄԵՆ
ԶՂՓՈՆ ԿԱԻ ԴՂՈՆ ԿԱՏԱԴԵԼԱՏԱՑ ԶԽՐԵԼՈՑՈՒՄԱՆ ղն
ԴԱ ԴՂԱՅԱՏԱ. ԿՂԼ.

պով չի յիշատակեր զայն¹։ Այլ ինչպէս կը գրէ նա առ Պոյիմենիոս, փաւստոս՝ իւր դարձին միջոց ի կենսարիոյ Ստատադացոյ՝ եկեղեցական նահանգ եղող առաջին Հայոց արեւելեան թեմէն կ'անցնի. ապա ուրեմն հարկ էր որ իւր եպիսկոպոսական օթոնն գտնուէր դեռ աւելի արեւելեան կողմը, այն ինքն է՝ Մեծ Հայոց մէջ։ Շատ լաւ կը յարմարին այս բանիս այն խօսքերն, յորս երկու անգամ կը յիշատակուի՝ թէ նա զրկուած էր Պապէն, և այս անունն շատ մօտ է անհասկանալի երեցած մեկնիչներուն։ Սինչ բնաւ կանապէս զաւրիչ մէկը չէր՝ բայց ժամաւ նակալից հայ թագաւորն։ Ս. Բարսղի մեզի հաղորդած ծանօթութիւններէն կ'իմանանք, թէ նա ինքն՝ Մեծին Հայոց մէջ եպիսկոպոսներ ձեռնադրելու առթիւ՝ նոցա մասին տեղեկութիւններ ստացաւ Առաջին Հայոց եպիսկոպոսներէն, որ շատ բնական էր, իրարու մերձաւոր դրացիք լինելով և մի և նոյն լեզուն ունենալով²։ Դարձեալ, արքեպիսկոպոսին թուղթերէն յայտնի է՝ թէ Ս. Ներսիսի մահուան յետոյ՝ թագաւորն իսկ և իսկ չի խզեց կեսարիոյ հետ եղած միութեան զօրը։ Փաւստոսի երթն առ Ս. Բարսեղ՝ ձեռնադրուելու համար՝ կը նշանակէ, թէ ի սկզբան հայ արքունիքն հակամէտ էր հպատակելու կեսարիոյ սիւննդոսին որոշմանց. սակայն հակառակ կուտակցութիւնն ի դերու հանց ամենայն ինչ, կիրիւրդ անուանով մէկը ընտրած լինելով արդէն նոյն եպիսկոպոսական օթոնոյն համար՝ զոր թագաւորն սահմաններ էր փաւստոսի։ Եպիսկոպոսութեան երկու թեմանոց խնդրոյն մէջ՝ Ս. Բարսեղ փաւստոսի հակառակ վճիռ տուաւ. և այս

բանիս հետեանքն այն եղաւ՝ որ Հայք դիմեցին առ Ալեքսանդր, նախանձորդն Բարսղի և մետրապոլիտն Բ Նապաղովիոյ, որ ամենայն յօժարութեամբ եպիսկոպոս ձեռնադրեց փաւստոս և պաշտօնանկ բրաւ զկիրիւրդ։ Ինչպէս ապագային մէջ պատահած դէպքերն կը ցուցնեն, այս բանն աւելի ևս զարագաց կեսարիոյ հետ եղած հակառակութիւնը, թէ և սաստիկ եկեղեցական կուտակցութիւնն տակաւին երկար ժամանակ հաստատուն պահեց միութեան հին կապը։ Թէ՛ սրբափ ցաւ և վիրտ պատճառեց կեսարիայէն անշատուամբ այն շրջաններուն մէջ, կը ցուցնէ Ղևոնդիոսի գրած թուղթին առ Տրդատ թագաւոր. « Եւ հաստատեալ կայցէ վիպյութիւն ի մէջ երկուց կողմանցս, զի պարզաբարձութիւնն նաւորգեալ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ, առ ի մէնջ կայցէ անշարժ յեկեղեցոյս կեսարու. ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռնադրութեան »։ Սակայն եկեղեցական դասուն զգացած այն տհաճութիւնն ոչ մի արդիւնք չունեցաւ։ Ս. Բարսղի գործածած խիստ միջոցներն բնորոշ մ'այնպէս եկեղեցոյ՝ եկեղեցական քաղաքականութեան աղիտաբեր վրիպակ մ'եղան։ Թէ՛ սրբափ խոր թափանցեւ էր Հայոց արեւան և մարմնոյն մէջ՝ եկեղեցոյ բացարձակ անկախութեան գաղափարն, կը ցուցնէ մեզ նոյն ինքն փաւստոս, գործածելով անխտիր՝ նախկին կաթողիկոս անունն հետ միասին՝ նոր և նոյն ժամանակ միայն պատշաճեցուցած հայրապետ (πατριάρχης) կոչումը։ Դարձեալ, կեսարիայէն ուղեցած կաթումը և հպատակութիւնը ջնջելու միջոց՝ կարելի էր ստուգիւ աւելի հնազանդ օրինակաց կամ՝ դիպաց մերայ հաստատուիլ։ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրուելն ի Ղևոնդիոսէ՝ կ'աւանդէ մեզ Ազաթանգեղոս, իսկ արդ ձեռնհաս հեղինակութեամբ հերքուած է այդ աւանդութիւնը³։ Բայց եթէ տակաւին երկրայելի ևս մնայ այս իրը, այսպիսի ինչ

1. Նա անխտիր Ἀρμενία կ'ըսէ Ա Հայոց համար (թղ. 187), և Ἀρμενία μικρά Բ Հայոց համար։

2. Ս. Բարսեղ իւր 187 թղթոյն մէջ կ'ըսէ, որ Ներսիսի մահէն մէջ արժանաւոր և յարմար անձինք գտնեն Հայաստանի եպիսկոպոսանիւտ օթոններուն համար, « διὰ τὸν εἶναι ἐν τῇ παροικίᾳ αὐτοῦ καὶ εὐλαβεῖς καὶ συνετοὺς καὶ τῆς γλώττης ἀμπερὺς καὶ τὰ λοιπὰ ὑψώματα τοῦ ἔθνους ἐπισταμένους. Արքունի տան եպիսկոպոս փաւստոս (փաւստ. Ե և Զ), որ մեր փաւստոս պապին չէ, յայտնապէս « ազգաւորութիւն » կ'ըսուի և այս բանն կը ցուցնէ թէ այն միջոցները կենսային յոյս ազգաւ եպիսկոպոսներ ևս դառնուի մեծ Հայոց մէջ։

1. Աբաթ. թժՁ. — հմտ. v. Gutschmid, Kl. Schr. III, S. 392.
2. v. Gutschmid, Kl. Schr. III, S. 418. տես Ա Յ—իւս—ը, էջ 533.

ստոյգ է՝ թէ Ս. Գրիգորի որդին Արիստա-
կէս իւր ձեռնադրութիւնը շնորհունեցաւ ի
Կեսարիա, այլ նոյն իսկ Գրիգոր ձեռնադրեց
գնա կաթողիկոս՝ ի խնդրոյ Տրդատ թագա-
ւորին, երբ ինքն կ'ուզէր առանձնանայ (Ա.
գաթ. ՃԻԴ). « Զոր ձեռնադրեաց յեպիս-
կոպոսութիւն փոխանակ իւր, որպէս ըստ
գրեցեալոյն ի դէպ, թէ՛ փոխանակ հարց ե-
ղիցին որդիք կալ իշխան ի վերայ երկրի »
(Սղմ. ԽԴ, 17)։ Ինչպէս յայտնի է՝ այս
տեղ լոկ աթոռակցի կամ տեղագահի վերայ
չէ խօսքն, այլ ստոյգ յաջորդի մի ընտրու-
թեան վերայ է, և կամ « աթոռակցի՝ հան-
դերձ իրաւամբ յաջորդելոյ » (coadjutor
cum jure succedendi). Այլ Արիստակիսի
և ոչ Վրթանիսի համար չի պատմուիլ բնա-
թէ թ Կեսարիա գնացած լինին ձեռնադրուե-
լու համար, մինչդեռ Ս. Յուսիկէն մինչև
ի Ներսէս՝ բոլոր կաթողիկոսք Կեսարիա գը-
նացին շնորհունելու իրենց ձեռնադրութիւնը՝

Պապ թագաւորն և Աղբիանոսի տոհմէն
ընտրուած կաթողիկոսք, — զորս փառապա-
հանուած նուիրապետք այնպէս սասանիկ կեր-
պով արհամարհեցին, — տէրութեան կուսակից
մարդիկ էին և հետևաբար հոգան, որոնք ան-
շատեցին զՀայաստանն ի Կեսարիոյ, և այսու
ձեռք բերին հայկական եկեղեցւոյ վերջնա-
կան անկախութիւնը։ Շատ հնապրքորական
են նոյն միջոցներու զրոյցք, որոնք՝ ժամա-
նակին հանգամանքները ի նկատի առնելով՝
կը սկսին արդէն կողմնակցական ոգով լռել
բոլորովին Կեսարիոյ հետ եղած սերտ յա-
րընչութեան վերայ։ Յովսէփ կաթողիկոսն՝
Հայոց եպիսկոպոսաց և մեծամեծաց հետ
միաբան՝ գրելով յամին 450 առ Թէոփոս
կայսրն, յետ յիշատակելու Տրդատայ հայ աշ-
խարհին տիրապետելը, կը յաւելու. « Սոյն-
պէս և զհաւատած որ ի Քրիստոս՝ բնկա-
լեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ,
լուսաւորեաց զհաւարային կողմանս հիւսի-
սոյ »։ Տրդատ և իւր ժողովուրդն ուղղակի

Հռովմայ եպիսկոպոսապետէն ընդունած լի-
նելով նոր հաւատքը, ինչպէս ըստած է յի-
շեալ վկայութեան մէջ, մի և նոյն ոգին կամ
ձկաւմն կը ցուցուի նաև այս տեղ¹, ինչ որ կը
դիտէ նաև Գրիգորի տեսիլն յԱզաթանդեղոս։
Սակայն Վաղարշապատի գրոյցն, որ առաջին
անգամ պատմուած է յիշեալ տեսիլան մէջ,
պէտք էր յաղթանակել՝ ինչպէս զիրաւ կըր-
նար գուշակուիլ. որովհետև նա մէկ կողմանէ
կը փայտայէր Զաքարիայի անկախութեան զգա-
ցումը, և միև կողմանէ իբր գորաւոր թումը
մի կը կանգնէր ընդդէմ ամենայն սոսկական
փառասիրութեան և ընդդէմ պահանջմանց
որ և է մետրապոլիտի, ուղղակի նոյն իսկ
Քրիստոսի ընծայելով հայկական եկեղեցւոյ
հաստատութիւնը. այլ ստուգել ոչ հռովմէա-
կան և ոչ ազգային զրոյցք կարող չեղան բո-
լորովին ջնջել ճշմարիտ աւանդութիւնը։

Թագաւորին եկեղեցական քաղաքականու-
թիւնն թէ և յաղթանակեց, սակայն ի վերջոյ
թագաւորութիւնն զլիսովին ընկճեցաւ, և Ս.
Ներսէսի յիշատակն նոր փայլով մի արծարծե-
ցաւ վերստին։ Մանուէլ Մամիկոնեան, ու-
րուն հոթնամեայ իշխանապետութիւնն (378—
385) հայկական պատմութեան մէջ վերջին
լուսաւոր կէտը կը կարգէ, իւր եկեղեցական
քաղաքականութեան մէջ ըստ ամենայնի մեծ
հայրապետին սկզբանց հետեւեալ, և նորա
կոնստական պատուէրները ընտրեց իբր առաջ-
նորդ հայ ժողովուրդեան²։ Յետ իրեն մա-
հուան, երբ Հայաստան բաժնուեցաւ Հռով-
մայ և Պարսկաստանի մէջ, շատ վտանգա-
ւոր հանգամանաց մէջ ինկաւ հայկական ե-
կեղեցին։ Եթէ նոյն իսկ մէկ կողմանէ Հա-
յաստան եկեղեցական քաղաքականութեամբ
այլ ևս անջատուեր էր հռովմէական կայսե-
րութեանն՝ շնորհիւ իրեն կաթողիկոսութեան
անկախ ինքնավարութեամբը, այլ միև կող-
մանէ՝ պարսիկ պետութեան քաղաքականու-
թիւնն՝ որ իրեն յատուկ նպատակ մ'ունէր
և կը զիմէր առ այն, կը սպառնայր խզել
յոյն մայր եկեղեցւոյ հետ ունեցած կրթու-
թեան և զարգացման փոփոխակի առնչութիւն-

1. Ա. Յուսիկէն միջոց տեղի ունեցաւ սովորութեան
զործադրութիւնն, ինչպէս կ'ըսէ փառապա-
հանուած (Գ, ԺԲ), « ըստ սովորութեան օրինակին »։ ապա ուրեմն եղբը
է նախորդ դէպք մի։

2. Եղիշէ, Պատմ. վասն Վաղարշ. և հայ. պատմաբա-
մին (հրատ. Վենետիկ. 1893, էջ 133)։

1. Գրաւաշմիւլ, յիշեալ Գրքին մէջ, էջ 413-

2. Փառապ. Ե, ԽԴ։

նը, Ռուսացոյ Մերուժան արծրունին դրու-
թեամբ և կանոնաւորապէս այրել տուեր էր
Հայաստանի մէջ գտնուած բոլոր յունարէն
գրքերը, ինչպէս կը պատմէ Կորիւն¹. և նոյն
ժամանակաց պարսիկ կառավարիչք արգիլե-
ցին յոյն գրականութեան ուսումը, մինչ ընդ-
հակառակն թոյլ տուին միայն ասորի լեզուին
ուսումը: Եւ այսպէս ճակատագիրն կը սպառ-
նայր հայկական եկեղեցին զօսացնել և մեղքը-
նել նոյնպիսի կղզիացմամբ, ինչպէս պատահե-
ցաւ Պարսկաստանի ասորական (վերջը նեւ-
տորական) եկեղեցւոյն: Այս բանին առաջն
աղին Ս. Սահակ, Ներսէս պարթևի մեծա-
նուն օրդին, և իւր բարեկամն Մեսրոպ:

Սոցա հետ հայկական եկեղեցւոյ պատ-
մութեան նոր գլուխ մի կը սկսի Ս. Սահակ
մարմնացեալ զազափաթականն է մի այնպիսի
կաթողիկոսի, որպիսի կ'երազէր յետագայ հայ
եկեղեցին: Եւս երկար միջոցի նստեցաւ
զարձեալ Ս. Թադէոսի աթոռոյն վերայ Լու-
սաւորչի տոհմէն կաթողիկոս մի, ուստի և
կատարելապէս օրինաւոր և ընդունելի ամե-
նայն կուսակցութեանց ևս: Երողիւնով նա իւր
շուրջը վաթսուն աշակերտներ, որոնք իւր-
տակոսն վարուք և ճշնութեամբ կ'ապրէին,
նուիրապետական և վանական կուսակցու-
թեան միակ և ամենասիրելի անձն եղաւ. այլ
զիտցաւ նա միանգամայն շահիլ ազգային
կողման սէրը և համակրութիւնը: Գործորի
տոհմէն ինքն եղաւ առաջին կաթողիկոսն,
որ առանց վարանելու ճանցաւ և ընդունե-
ցաւ զեռ այն ինչ նոր ձեռք բերուած եկե-
ղեցական անկախ ինքնավարութիւնը². ուս-
տի և հակառակն չէր բնաւ կեցարիւյ եկե-
ղեցւոյն հետ նոր յարաբերութիւն մի հաս-
տատելու ձկտումին, որ տակաւին կենդանի

էր ասա անպ եկեղեցական շրջաններուն մէջ,
Այլ իրեն ստոյգ և մեծ արդիւնքն՝ ազգին
բարոյն համար՝ եղաւ ազգային հայ գրա-
կանութեան հաստատութիւնն: Ս. Մեսրոպ-
բայ ձեռքով եղած գրոց գիւտն այնպիսի ուժ
և մղում մի տուաւ ազգին, — որ մինչև այն
ժամանակ զուրկ էր գրականութենէ, — որ
իրեն համար թարգմանիչներու վարժարան մի
հաստատեց, որոնք Ս. Սահակայ և Մես-
րոպայ առաջնորդութեամբ զարմանալի զոր-
ծօնէութիւն մի ցուցուցին, և ազգային բնիկ
գրականութիւն մի յառաջ բերին, որ ըստ
ամենայնի համաձայն էր եկեղեցական դա-
ստ ձկտումներուն, և որ հետեւաբար ի սկզբ-
բանէ յունական տիպ կամ կնիք մի ստա-
ցաւ: Ոչ մէկ բան այնչափ հակառակ և ար-
գելք չէր պարսիկներու եկեղեցական — քա-
ղաքական ծրագրի գործադրութեան, — որով
կ'ուզէին նորա Հայոց առջեւ փակել յունական
եկեղեցւոյ և կրթութեան ճանապարհը, — ինչ-
պէս այս երկու անգագական անձանց (Ս.
Սահակայ և Մեսրոբայ) գիտական գործօ-
նէութիւնն. որովհետեւ սորա եղան՝ որ դար-
ձեալ միացուցին Հայերը Յունաց հետ՝ հո-
գւոր հաստատուն կապով մի: Այս պատճա-
ռաւ ևս պարսիկ կառավարութիւնն սկսաւ
նեղել և չարաչար վարուիլ նոցա հետ, որով
իրենք այլ ստիպուեցան թողուլ իրենց բնիկ
երկիրը և երթալ յունական հողին վերայ՝
յալողութեամբ շարունակելու իրենց թարգ-
մանութիւնները: Ընդհակառակն յոյն կառա-
վարութիւնն հակառակալով իսկոյն՝ թէ հայ-
կական ազգային ձեռնարկին յաջողութիւնն
կրնար իրեն նպաստաւոր ըլնել, և շահաւոր լինել,
հրամայեց Անատոլիոս զօրավարին՝ որ հայ-
կանական բաժնին կառավարին էր՝ հողալու
հայ վարժարանաց պէտքերը տէրութեան ծա-
խուք. և այս կերպով այն մեծ ձեռնարկն
անընդհատ շարունակեց իւր ընթացքը և կըր-
նանք գուշակել պարսիկներուն զայրոյթը Ս.
Սահակայ սակաւ մի յետոյ գահընկեցութեան
դիմաւոր պատճառն եղաւ իւր առ յայնս ցու-
ցած չափազանց համակրութիւնն³: Երկու ե-

1. Մոփերք հայկ. եւ. Թ. էջ 12.

2. Վերջին ժամանակաց հայ պատմիչներէն ոմանք
կ'ուսանէն, իբր թէ՛ Արշակ Թադէոսին նախադա-
նութեամբ հուսարուած նախարարաց ժողովի մի մէջ՝
Ս. Ներսէս անկախ պատրիարք հրատարակուե՛ր է!
(Յովհ. Կաթ. հրատ. յերուսաղեմ, 1843, էջ 32. Սահ-
փանոս Արքեպիսկոպոս, Պատմ. Միւնեսայ)՝ Սոյն երկու պատ-
միչներու այլ հայկական եկեղեցւոյ առաքելական ծաղ-
կան վերայ հիմնուած են, որուն ի հաստատութիւն ցոյց
էր ասան առաքելոց զերգործանքերը: Յայտ է թէ՛ Ն և
Ջ զարգաց մէջ Յունաց ունեցած զայրափարն է այս,
որ աւելի վերջը մուս զուրք է նաև Հայաստանի մէջ:

1. Մովս. Խոր. Գ. ԿԳ, և անանուն Combesis.
hist. Monoth el. 289. — Ազգային ամենաին տե.

կամուտ աստիճաններու կաթողիկոսական զանուն վերայ բազմիմն՝ պարսիկ կառավարութեան ձեռքով, արդէն յայտնապէս կը ցուցնէ թէ որչափ կ'աշխատէին պարսիկք՝ թէ և անօգուտ կերպով՝ խանգարել և ոչնչացնել Սահակայ և իւր բարեկամաց ձեռնարկը։ Եւ յիշատիք Ս. Սահակայ գերազանց անձնաւորութեան միջոցաւ՝ եկեղեցական բարձրագոյն աստիճանն այնպիսի կարեւորութիւն և հեղինակութիւն մի ստացաւ հայ ժողովրդեան մէջ, որպիսի բնաւ ունեցած չէր յառաջն։

Յետ բաժանման Հայաստանի և կործանման թագաւորութեան, կաթողիկոսն էր միակ իրական կապն ազգին միութեան¹։ Ինչպէս որ երբայեցոց մէջ՝ գերութենէն վերջը՝ քահանայապետն էր ազգին զուխը, այսպէս այլ Հայոց մէջ կաթողիկոսն էր՝ յետ բաժանման թագաւորութեան. և ինչպէս հրէից մէջ նա էր իշխան, և միանգամայն պատասխանատու և ներկայացուցիչ ազգին, այսպէս նաև Հայոց մէջ՝ կաթողիկոսն իբր թագաւորի փոխանորդ կը համարուէր։ Նշանաւոր հանգամանք մի կայ, որ ըստ արտաքին երևութիւն այնչափ նշանակութիւն չունի, բայց Հայոց և ուրիշ ազնուապետական հասարակապետութեանց մէջ շատ կարեւորութիւն կը տրուէր, որ է՝ կարգն աստիճանի և տեղացի նախարարութեանց կամ ազնուական տուներուն։ Պատմական ամենահին աւանդութիւնն՝ թագաւորաց կ'ընծայէ զայն, զոր Արշակ թագաւորն (337—367) վերջին անգամ հաստատեց հանդիսաւոր կերպով²։ Ընդհակառակն, Ս. Ներսիսի վարուց պատմագիրն՝ կաթողիկոսին կ'ընծայէ Հայոց իշխաններուն պատուոյ և աստիճանի դասակարգութիւնը, զոր իւր գրքին մէջ գետեղեր է։ Արշակէն վերջը՝ Ս. Ներսէս նորոգեց իշխանաց զահրքը, զոր հաստատեր էին հին թագաւորներն, և որչեց նոցա իւրաքանչիւր կարգը թագաւորական սեղանին վերայ³։ Ուրիշ նմանօրինակ իշխանաց ցուցակ մի եւս

կը գտնուի Ս. Ներսիսի վարուց պատմութեան ծանօթութեանց մէջ, որուն հեղինակն Ս. Սահակ կը համարուի, իբր թէ պարսից թագաւորին հրամանաւ հաստատած լինի։ Ինչպէս յայտնի է, յետագայ Հայոց գաղափարին մէջ կաթողիկոսն՝ իբր եկեղեցական գլուխ՝ թագաւորին տեղապահն էր։ Ո՞վ կարող է ուրանալ այն ամենամեծ տարբերութիւնը՝ որ կայր ընդ մէջ համեմատաբար համաստ և շափաւոր դրութեան Ս. Գրիգորի և նախկին կաթողիկոսաց՝ և ընդ մէջ ձոխ և շքեղ կացութեան անկախ հայրապետաց, որպիսի էր յիշատիք Ս. Սահակ։ Սակայն յետագայ ժամանակաց պատմութիւնն գիտցաւ ճարտարութեամբ քողարկել այս տարբերութիւնները, և նախկին ժամանակաց դէպքերը՝ Ս. Սահակայ միջոցներուն նորանոր տեսութեանց համեմատ՝ տարբեր լուսոյ մի մէջ դրաւ, և մեծաւ մասամբ կերպարանափոխ ըրաւ զանոնք։ Հետեւաբար մեծ բարբախտութիւն մի համարելու է այնպիսի պատմական գրութեան մի գոյութիւնը, որ թէ հին և թէ միանգամայն նոյն ժամանակի յատուկ նկատմաներէն ազատ եղած լինի։ Այդ պատմական գրութիւնը փաւստոսինն է, որուն տուած տեղեկութեանց շնորհիւ միայն կարող ենք վերցնել աւանդութեան և կեղծ պատմութեան քոյր, որ կը ծածկէ հայկական եկեղեցւոյ պատմութեան սկզբնաւորութիւնը, և զանել գոնեա մասամբ իւրից ստոյգ իրողութիւնները։

ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

Ս.

Պէտք է խոստովանիմ, թէ Ս. Գրիգորի ի նշանաբան ըրած ուղեւորութեան պատմութեան վաւերականութեան հակառակ՝ Գուշափի բերած փաստերն բոլորովին համոզիչ չեն թուի ինձ։ Ամենէն աւելի ծանրակշիռ փաստն է ժամանակագրականն և նշանաբան

զեկութիւնն, որ է Ղ. Փարպեցւոյն, այս մասին ընտելաշատեկութիւն չի ընէր. նա Ս. Սահակայ զահրքէնցութեան միակ պատճառ կը դնէ՝ իրեն չի մասնակցելն նախարարաց խորհրդին ընդէմ Արտաշէր թագաւորին։

1. v. Gutschmid. Kl. Schr. III, S. 383.

2. Փաւստ. Դ, Բ.

3. Սոփեբա հայկ. Զ. էջ 52.

4. Ս. Ներսիսի վարուց պատմութեան հրատարակիչն (Հ. Ղ. Վ. Ալիշան) կու տայ մեզ զայն իւր թանկագին ծանօթութեանց մէջ, (էջ 132-3). տես նաև Լանգուայի զեկագութիւնները (Collection II, p. 26).

հայրապետն Ղևոնդիոս առաջին անգամ կը յիշատակուի յամին 314 և վերջին անգամ 325ին: Նա չէր կարող 304 տարիէն յառաջ, ինչպէս ընդունուած է միայաբանութեան մէջ, իւր պաշտաման մէջ լինել: Տարակուսական է այն երթագրութիւնն՝ որով երկար տարիներու հայրապետութիւն մի կ'ընծայուի թէ Ղևոնդիոսի և թէ Գրիգորի, թէպէտ բոլորովին ևս հերքել զայն կարելի չէ: Դարձեալ, Հայաստանի դարձն և առաջին եպիսկոպոսական ձեռնադրութիւնն մի և նոյն ժամանակի մէջ տեղի չեն ունեցած. վասն զի յետ դարձին Հայաստանի, որ պատահեալ զրեթէ 280ին միջոցները, քրմաց բռնուն և սաստիկ դիմադրութեամբ՝ կը սկսի յարձակումն ընդդէմ կողմ և մեհենից Արտաշատու, Թորգանի, Անայ, Էրեզ, Թիլ և Բաղայառին աւաններուն, որ տեղեց երկար ժամանակ: Սոյոգ է թէ շատ տարիներ անցան՝ մինչեւ որ այդ դէպքերը կատարուեցան, մինչ պատմիչն կը կցէ զանոնք իրարու ետեւ: Ըստ պատմութեան նոյն իսկ Ագաթանգեղոսայ, առաջին յարձակմամբ կարելի չեղաւ տիրել և կործանել, օրինակ իմն, Արտաշատու և Էրեզ աւանին ամուր մեհեանները, որոնք յամառ դիմադրութեամբ կռուեցան: Այդ այս դէպքերէս վերջը միայն տեղի ունեցաւ Ս. Գրիգորի ուղևորութիւնն. ապա ուրեմն ամենէն ուշ պէտք է դնել զայն յամն 285—290. հետեւաբար Ղևոնդիոս զրեթէ 30—40 տարի հայրապետ եղած կը լինի, որ շատ երկայն միջոց է: Բայց բոլորովին ևս անկարելի չէ այն, եթէ յիշենք — հին եկեղեցիէն միայն օրինակներ մէջ բերելով — Նարեկիստի՝ Երուսաղեմայ հայրապետին կամ Ս. Աթանասի «աստուածահաճոյ և բազմաթմանակեայ քաղաքավարութիւնները կամ կեանքերը»¹: Դարձեալ, ուշ չէ դրած Գուտշիպի՝ թէ Լուսաւորի ուղևորութեան պատմութիւնն, թէ և մանրամասնութեանց մէջ ընդհանրապէս մութ կամ նոյն իսկ զրուցախառն գրութիւն մ'է, սակայն զիաւոր մասնաց մէջ վաւերական յիշատակարանաց վերայ հիմնուած է, ինչպէս է՝ Ս. Գրիգորի

ուղեկից իշխաններուն և եպիսկոպոսաց առաջնաց ցուցակն (Ագաթ. ձժԹ). նոյնչափ արժէք ունի նաեւ Տրդատ Թագաւորին ընկերակցող իշխանաց ցանկն (անգ. ձժԹ), Գուտշիպի (Kl. Schr. III S. 391) հետեւալ գիտողութիւնը կ'ընէ այս մասին. «նրկին անգամ յաշտակելն տէրութեան մեծամեծները ըստ իրենց կարգին, զոր տնէին Տրդատ Թագաւորին արքունեաց մէջ, Թուի թէ ուրիշ նպատակ չունէր՝ բայց միայն շարժել ազնուականաց հետաքրքրութիւնը, որոնք պիտի կարգային զիաւորապէս նոյն գիրքը, և միանգամայն կը ծառայէր — ուշ դնելու է այս բանին — առաջին անգամ ուղևակի և երկրորդ անգամ անուղևակի կերպով Ս. Գրիգորի փառքը մեծցընելու»²: Սակայն անհիմն կարծիք մ'է այս. վասն զի ուշ միայն գրական գիտն չէ այս՝ մի ո՞ր և է արքունի դրան երիցու, որուն նպատակն եղած լինի ազնուականութիւնը շողմել, այլ ընդհանրական թագաւորական գիւններէն հանուած վաւերական տեղեկութիւնք են: Սիւս է նոյնպէս Լազարոյի կարծիքն (անգ. էջ 162), իբր թէ երկու ցուցակներն զանազան ժամանակաց գրութիւնք են: Այն նահանգներն, որոց վերայ կը հսկէին սաճմանակալք, «հաւանականաբար» կորուսած կամ ձեռքէ ելած չէին դէպ ի նշարաբար եղած ուղևորութեան միջոց. այլ անշուշտ յարմար ժամանակ չէր նոցա՝ ընելու այն քաղաքական ուղևորութիւնը դէպ ի Գամրայ աշխարհն, զի ճիշդ պատահեցաւ այնպիսի ժամանակի մէջ, յորում Հռոմայն և Պարսկաստանի մէջ եղած յարաբերութիւնք լաւ վիճակի մէջ չէին. հետեւաբար Արտեմուսանաց և Միջագետաց կողմերուն սահմանակալք կարող չէին թողուլ իրենց տեղերը:

Դարձեալ, Թագաւորին դէպ ի Հռոմ ըրած ուղևորութիւնը պէտք է աւելի կարեւոր շարժառիթ մ'ունեցած լինի, քան թէ լոկ ուրիշ աւելի հնազոյն Տրդատայ ուրումն ծանօթ այցելութեան «աղօտ յիշատակութիւնն»³: Ներոն կայսեր ժամանակը, յամին 66 յետ Գրիստոսի: Անտարակոյս վաւերական է յիշատակարանն. և որովհետեւ հայ Թագաւորին ընկերողաց մէջ՝ իւր ուղևորու-

1. Θεάρεστοι καὶ πολυχρόνιοι πολιταῖται.

թեան ժամանակ յաշխարհն հռովմէական՝ նոյն հաստուածին մէջ բաց ի Տրդատայ կը յիշատակուին նաև արքեպիսկոպոսն Գրիգոր (Լուսաւորիչ), իւր որդին Արիստակէս և Աղբիանոս եպիսկոպոսն, հետևաբար սոյն ղէպքս կամ պատմութիւնս միայն Տրդատայ ժամանակին կրնայ յարմարիլ (264—317)։ Մարտիրոսն պատերազմեցաւ և յաղթուեցաւ Հայերէն, զորս Եւսեբիոս « արտ ի սկզբանէ բարեկամս և մարտակիցս կամ նիզակակիցս Հռովմայեցոց » և կ'անուանէ։ Մարտիրոսի մահուամբ (313) և յետ Եփրատեայ մօտ եղած պատերազմին (314), Կոստանդիանոս իւրօք տէր եղաւ աշխարհին, թէ և թողոց զլիկիւնոս իբր իրեն երկրորդ կամ կայսերակից յարեւելս. այն միջոց Կոստանդիանոս սակաւ մի ժամանակ մնաց ի Լիւրիկէ, ի Սիրմիոն և ի Սարդիկէ՝ տէրութեան զործերը կարգադրելու համար (Clinton. Fasti romani I, 368)։

Կոստանդիանոսի և Հայոց մէջ եղած դաշնակցութեան մասին ամենէն աւելի հնագոյն և արմատահաւատ տեղեկութիւնն է Փաւստոսին։ Մէկ կողմանէ՝ Հռովմայ և Հայաստանի, և միւս կողմանէ՝ Պարսից Շապուհ Բ թագաւորին մէջ ծագած պատերազմին առթիւ (յսմին 337) կը գրէ (Գ, ԻԱ). « Եւ օգնական և թիկունք լինէր (կայսրն) աշխարհին Հայոց. մանաւանդ զի զուխոն յիշեալ զգալանցն կռելոց զերգմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր »։ Այսպիսի պարզ տեղեկութիւն մի, որ կատարեալ կերպով կը համաձայնի ուրիշ ամենայն պատմական հանգամանաց, միայն քմահաճոյ կամքն կարող է կասկածաւոր համարել՝ իբր ոչ պատմական։ Ամենաբնական բան էր որ Հայերն, մինչևս անստոյգ պրութեան մէջ էին պարսիկ տէրութեան նկատմամբ, և զեռ թարմ էին իրենց մտաց մէջ Մարտիրոսի յարձակմանց յիշատակներն, մօտենային սերտիւ քաջ և նարսար իշխանին և պաշտպանին քրիստոնէ։

ից, որ այնպէս ակներեւ Աստուծոյ օգնութիւն զտե՛ր էր։ Չի նայելով Գուտշիդի կարծեաց, Հայաստանի համար այդ էր միակ նշմարիտ և բանաւոր քաղաքականութիւնն։ Բայց թէ արդեօք խաղաղութեան պաշտօնական դաշնակիր մի կայր՝ երկու դաշնակից ազգերէն ևս հաստատուած, թէ լոկ մտեմական համաձայնութիւն մ'էր երկու դաշնակիր պետութեանց մէջ. այնչափ դժուարին է որոշել այդ բանը, որչափ որ սակաւ ժամանակ յառաջ Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ հաստատուած դաշնակցութեան խնդիրը։ Բայց թէ հայ թագաւորն, իբր նիզակակից հռովմէական ժողովրդեան, քան զամէն արքունի նշանաւոր իշխան աւելի բարձրագոյն տեղ և առաինան զբաւեց և կայսերական արեւակից իշխանաց յատուկ բոլոր առանձնաշնորհութիւնները վայելեց, կը վկայէ մեզ հետեւեալ հրովարտակն (Cod. Theodos. XI Tit. I, de annona et tributis) 4. « Ինքնակալ կոստանդիանոս Ա առ Պրոկլիանոս. Բաց ի մերոց սոսկականաց իրաց և յեկեղեցեաց կաթողիկեայց և ի տանէ հռչակելոյն բարեյիշատակ Եւսեբիայ՝ նախկին զոգնիւի և հրամանատարի հեծելոց և հեռակայաց և Արշաւայ աբղային Հայոց, ոչ որ ըստ հրամանի մերում ի մեծամեծոն վայելեցէ ի հասոյթս ընտանեկան գոյից »։ Հրովարտակն գրուած է առ Գ բոլշելութեամբքն Ա Կոստանդիանոսի և Լիկիանոսի (315 թուականին). իսկ գրութեան տեղը նշանակուած է Կոստանդնուպոլիս, որ շատ կասկածելի է յիրաւի, և կը պակսի հրովարտակին միւս օրինակին մէջ (Cod. Just. X, 16, 4). Դարձեալ անհիշեալ է այն դժուարութիւնն, զոր կը գտնէ վալուա՝ Ուրապ անուան մէջ։ Ինչպէս որ միւս անուններն այլ՝ զորս Գողթրուս և վալուա կասկածելի կը համարէին, որ են՝ Եւսեբիոս և Դատիանոս, ստոյգ և պատմականք են՝ ըստ ցուցման Հէնելի (Hänel, Sp. 1042

4. Imp. Constantinus A. ad Proclianum: Præter privatas res nostras et ecclesias catholicas et domum clarissimæ memoriæ Eusebii ex consule et ex magistro equitum et peditum et Arsacis regis Armeniorum nemo, ex nostra iussione præcipuis emolumentis familiaris tuvetur substantiæ.

4. "Ανδρας ἐξ ἀρχαίου φιλους τε καὶ συμμάχους Ὁμοῦσιον (Eusebios, Hist. Eccl. IX, 8, 2).

N. i) : Արդ, ինչպէս ամէն մարդ կը տեսնէ, յիշեալ Արշակն ուրիշ ոչ չէ՝ բայց Տըր-դատ թագաւորն . այսու կ'ապացուցուի՝ թէ հայ արշակունի պահաւք, իբր մէկ ճիւղն չորս պահաւունի արքունի տանց, թէ սովորութեանց և արքունի պերճութեան և ազնուականութեան աստիճաններուն մէջ, և թէ միանգամայն անուանակոչութեան մէջ, ճշդիւ կը հետեւէին իրենց նախահարց՝ հին պահաւունի արքայից արքաներու օրինակին : Ինչպէս որ դրամներուն վերայ Միհրդատ Ա (171-138)՝ կը կոչուի Արշակ Եպիփան, Միհրդատ Բ (123-88)՝ Արշակ Թէոս Եւերգետէս Եպիփան փիլիքլէն, և կամ Ռուդէս (57-37)՝ Արշակ փիլոպատոր Դիկէոս Եպիփան փիլիքլէն . այսպէս նաև չորս հարիւր տարի վերջը իրենց յաջորդն Տրդատ, ժառանգն հայկական երկրորդ ճիւղի ամուսնոյն, հռովմէական պետութեան հետ ունեցած պաշտօնական յարաբերութեանց մէջ կարող էր կոչուիլ Արշակ (հաւանականաբար՝ Արշակ Եւսեբիոս փիլոքոմէոս, և կամ նման ինչ) :

Տրդատայ ուղեւորութեան մասին դէպ ի Հռովմայեցոց աշխարհը՝ հետեւեալ կերպով կը գրէ հայերէն¹ Աղաթանգեղոսն (ՃԻՁ). « Ընդ ցամաք և ընդ ծով փութացեալ առապարեին, մինչ երթային հասանէին յաշխարհն Խաղիսացոց և յերկիրն Դադմատացոց ի թագաւորական քաղաքն Հռովմայեցոց » : Հայաստանի դարձին պատմութեան բարեմիտ հեղինակին ունեցած գաղափարներն արեւմտեան աշխարհագրութեան մասին, յիշուի փոքր ինչ մուծ և անորոշ են . սակայն բացարձակ հարկ չի կայ « թագաւորական քաղաքն Հռովմայեցոց » բացատրութեամբ հասկանալ միայն Հռովմ քաղաքը և կամ Եօր-Հռովմ (որ տակաւին շինուած չէր այն դաշինքը ղնելու միջոց) : Յայտնի է թէ « Խաղիսացոց աշխարհին » մեկնութիւն մ'է անմիջապէս մօտը կցած բացատրութիւնն « յերկիրն Դադմատացոց », զոր խելանքոքսեամբ (per synecdochen) կարելի է հասկանալ իբր կուսակալութիւն Լիւրիկէի « praefectura per Illyricum » (նման.

Լանգլուս, Հաւաք. Բ, 188) : Հետեւաբար « թագաւորական քաղաք » կոչուածն պէտք է լինի պատահական և առժամանակեայ բընակութիւնն ի Սարդիկէ (Sardique Sopha). ապա ուրեմն սոյն քաղաքիս մէջ տեղի ունեցաւ մեծին կոստանդինոսի և Ս. Տըրդատայ տեսութիւնն : Յունարէն Աղաթանգեղոսն հետեւեալ կերպով կը պատմէ . « Եւ զայսոցիկ պատմեցաւ իսկոյն յարքունական պալատանն : Չոր լուեալ կարի յոյժ աստուածապաշտ արքայն և պատուականագոյնն թագաւորաց կոստանդինոս և արքեպիսկոպոսն, որ հանապազ մտանէրն (և կայր) յապարանս նորա՝, որում անուն էր Եւսեբիոս, մեծաւ պատուով և սիրով ելին նոցա ընդ առաջ, և անդէն ի տիեզերական քաղաքին պատրաստութիւնն իջեվանս, զի հանգեցեն յերկարութենէ ճանապարհին : Այս պարմացեալ աստուածասէր կայսրն իկելու վերջին բառերը շատ խեղճ կերպով կը թարգմանէ յոյնս, ծ θεοφιλέστατος Καίσαρ) կոստանդինոս՝ քաջակերեաց զթագաւորն Տրդատ ասելով . Ո՛րպէս առ քեզ սքանչելիքն Աստուծոյ եղեն, եղբայր : Եւ նա պատմեաց զամենայն ստուգութեամբ առաջիկայսն, զ'առի յԱստուծոյ եղեալ մարդասիրութիւնն (և զպատուհաս լինելոյն ի կերպարանս անանոց՝ պատմեաց առանց մամոթոյ, և զվկայիցն նա հասակելոց զհամբերութիւնն²) և զամենայն գործեալսն մի բոս միովէ քարոզեալ պարպով, և զոր անդէն իսկ յանդիման կայսեր կացեալ զմեծն Գրիգոր ցուցեալ, ' Այս այն այր է, ասաց, յորոյ ի ձեռն ծանեաք մեզ զմարդասիրութիւնն Աստուծոյ, և վասն

1. Այս տեղ գործեալ յոյնն նոյնապէս կը կազմէ բութարգմանութեան մէջ, որպիսի որ իմին Հաւաքութիւնն մէջ ընդարձակօրէն թարգմանելով զՓառաւորս (նման. A. p. 503) : — « Եւ հայրապետն մեծ արքեպիսկոպոսն աշխարհաւուս Գրգիսն » կը թարգմանէ յոյնն . « καὶ ὁ ἀρχιεπίσκοπος εὐσεβίου τοῦ μεγάλου ἔν τῳ αὐτοῦ παλατίῳ πέντοτε » .

2. Սոյն փակագծերու մէջ գրուածն ինչ ասոյցէ աղբիւրէ անուան չէ, այլ անտարակոյս խորագրին յաւելուածն է : Յետ նոյն ժամանակի արժանաւորաւու պատմութիւնը խառնելու Աղաթանգեղոսի պատմիչաց զերոյցին հետ, հարկ էր հետեւաբար Հայաստանի մէջ պատահան նշանաւոր իրողութեանց հետ յիշատակել նաև Գայիանիայ և Հոփսիանիանց պանծալի նահատակութիւնը :

1. Յունարէնն լի է վերապահներով :

առնն ժուժկալութեան և համբերութեան և նշանացն և զարմանալեաց նոյաւ զործեցելոց, և վասն որոյ զարմացեալ յոյժ առաւանդայինն կոտտանդիանոս կայսր և խոնարհեցուցեալ զանձն, անկաւ առ աստ արքայն Գրիգորի, զի օրհնեցի ի նմանէ. և ըստ պատշաճի մեծարեալ զնա իրեւ զիստ, տօլանոզ ֆրիստոսի, և զՏրդատ արքայ ընկալաւ եղբայրական սիրով, և իբրն զեղբայր համաշունչ և հարազատ սիրեաց զնա, մաշակաւ տեսեալ զնա քրիստոսաւոր՝ դարինս ընդ նմա կոեաց, միջնորդ կալեալ զոր ի Տէր մեր Յիսուս Քրիստոս գհաւատան, որպէս զի անհախտ (անթերի, ἀπαρραλէπτως) կայցէ մնացէ մինչ ի սպառ բարեկամութիւն՝ ի մէջ թագաւորութեան նոցա. և հաստաւ տեսա՞ զարքայն Հայոց ևս քան զկես ի խոտովանութեան սրբոյ Երբորդութեան » :

Քան զայս աւելի յստակ, որոշ և տրամաբան պատմութիւն չէ կարող լինել, յորում չերևիր բնաւ ոչ մի հետք այն սովորական խարդախութեանց՝ որոնք յատուկ են բարեպաշտ զրոյցներ յօրինողներուն : Ի բաց առեալ խմբագրողին վերոյշեալ փոքր և անփաստ ելուցումը, պատմութիւնն ըստ ամենայնի վաւերականութեան կնիքը կը կրէ վերան : Ո՛վ որ կը յիշէ, թէ ինչպիսի՜ չափազանց ազնուութեամբ և շքեղ մեծարանօք կ'ընդունուէին սովորաբար արեւելեան հասովական արքունեաց մէջ՝ կողմատու փոքրիկ վայրենի ազգաց քրիստոնեայ ծաղրական իշխաններն և կամ Ղլխիմու փոքրիկ թագաւորներն, իսկոյն կը պարզուի մտաց առկա, թէ Տրդատայ եղած վայելու՜լ այլ ոչ բնաւ տարօրինակ բնորոշեցութիւնն՝ ըստ ամենայնի իշխանական սովորութեան համաձայն էր : Այլ նոյն իսկ ոտից համարյոյն, որով կոտտանդիանոս պատուեց զԼուսաւորիչ՝ իբր սուրբ խոստովանող մի, բնաւ տարօրինակ բան չէր մի այնպիսի իշխանի համար, որ ի Նիկիա կայսերական սեղանին հրաւիրեց եպիսկոպոսները, և խոտովանոզ մկայից դատարկ ակնակապիճները համբուրեց, և որ ի մեծ շինութիւն Նիկոզայոսի Արամանեայ՝ քահանայապետական պալատան գրապետին՝ ծանուցած լինի . « օς ει αυτόπτης επισκόπου γάμον άλλοτριον

διορύττοντος γένοιτο, συγκαλύψαι αν τη πορφυρίδι το πορανόμως γενόμενον ως αν βλάβη τους θεωμένους των δρωμένων ή δψις » .

Իսկ արքունի դրան եպիսկոպոսի մասին՝ հայ Արամանեայի ընթերցուածն « Սեբեւտար » , յայտնապէս միջին դարու մէջ եղած խանգարում մ'է, ինչպէս համոզիչ փաստերով ցուցուց Տէր Միքէլեան¹ (Հայաստան . եկեղեցին և Բիւզանդ . ժող . պարագայք) : Արամանեայի պատմութեան ընտրելագոյն ձեւագիրն, որ կը գտնուի Պարսու ազգային գրատան մէջ, յունիս պէս « Եւսեբիոս » ունի : Բնականաբար առ այլ որ չէ՝ բայց միայն Եւսեբիոս նիկոմիդացին, կոտտանդիանոսի բարեկամն և ազգականն, զոր յաճախ կը գտնեմք նորա արքունեաց մէջ և որ մահուան անկողինին վերայ մկրտեց զինքը : Հարկ է ուշ զնել թագաւորին խոտքերուն . « Յաղաքս առնն . . . նշանացն և սքանչելեաց ի ձեռն նորա եղելոց » : Սոյն գովենաւ, որ ինքն միայն բոլորովին անկախ Արամանեայի տեղեկութիւն կու տայ մեզ Հայաստանի դարձի մասին, կ'ըսէ (Բ, Ը) . « զՀայս վարձեալ ուսայ նախ առաջին լեալ քրիստոնեայս . զի առի զՏրդատայ՝ զիշխանէ ազգին այնորիկ՝ ի ձեռն աստուածանշան սքանչելեաց առ առն իւր՝ իսկ և իսկ հաւատացեալ ի Քրիստոս, և միով քարոզութեամբ պատուիրեալ ամենայն իշխեցելոց իւրոց զնոյն և զմի հաւատոս պաշտել » :

Մինչև ցարգ ըսածներնուս իբր եզրակացութիւն կարող ենք հաստատել, թէ ըստբոլին վաւերական է Տրդատայ և Գրիգորի յարբունիս կոտտանդիանոսի ըրած ուղեւորութեան պատմութիւնն : և այսպէս նաեւ Հայաստան յամին 314, հաւանականաբար Սարգիսիէի մէջ, խաղաղութեան և միաբա-

1. Միւշին թէ պէտք չէր որ ստաբան Չենտայ գիտնականներն բնաւ արեւել յունեցող պատմութիւնը գործածէր :

2. 'Αρμενίους δὲ πάλιν πρότερον ἐπεθόμην χριστιανίσαι· λέγεται γὰρ Τηριδάτην τὸν ἡγούμενον τούτου τοῦ ἔθνους ἡ τινοὺς παραδόξῃ θεοσημείας συμβάσσης περὶ τὸν αὐτοῦ οἶκον ἅμα τε χριστιανὸν γενέσθαι καὶ πάντας τοὺς ἀρχομένους δι' ἐνὶ κηρύγματι προστάξαι ὁμοίως θρησκεύειν » .

նութեան պաշն կտեր է Հոռլմայ հետ, որ տեւեց մինչեւ 363 տարին :

Բ

Մինչև այս տեղ ըրած ուսումնասիրութեանս մէջ գիտամբ զանց ըրի յիշատակել հայկական եկեղեցւոյ ամենահին վկայութիւնը . որ է՝ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան այն բացատրութիւնը, յորում կ'ըսուի (2, 102). « Նշնպէս և առ Հայս զրեաց թուղթ վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր Մերութան ¹ » : Սոյն թղթոյս զրոյն էր Աղբրանդիոյ հայրապետն Դիոնեսիոս (248—265). զոր կը գտնուէր ապա սորա ժամանակակից Մերութանայ եպիսկոպոսական թեմն : Լը—կուիէն կը համարի զնա Սերաստիոյ մետրապոլիտ, հետեւել տկար պատճառաբանութեան վերայ հաստատուած . « Աւելի փոքուն՝ քան Մեծ Հայոց, ուստի և Սերաստիո մայրաքաղաքին եպիսկոպոս էր Մերութան՝ բրորդը դարու կիսուն ² » : Սերաստիոյ, Սերաստոպոլսոյ, Նիկոպոլսոյ, Սասաղայի և Ա. Հայոց ուրիշ եպիսկոպոսանիստ քաղաքաց եպիսկոպոսներու ցանկերը համեմատելով իրարու հետ՝ կը գտնենք որ արդէն Գ, Դ և Ե դարուց մէջ, յիշեալ տեղեաց առաջնորդը՝ որչափ որ գիտենք՝ բոլորն այլ յայն—հռովմէական կամ Ստոնածաշնի բնիկ անուններ կը կրեն . նոյնը կարող ենք ըսել նաև Մելիթսիէի թեմին համար : Ապա կը հետեի աւստի, թէ Մերութանայ եպիսկոպոսանիստ քաղաքը պէտք է փնտռել մեծ Հայոց մէջ, որովհետեւ « Մերութան » անունն իսկ բնիկ աղբայրն է և հայկական : Սոյն անունը կը կրէր նաև այն պարսկամուլ ուրացող արծրունի իշխանն, որուն համար կ'ըսէ փառասոս . « մի ոմն ի նախարարաց մեծամեծացն Մերութան անուն արծրունի » (Դ, ԻԳ) : Զուր

տեղ փնտռելի ուրիշ Մերութան մի հայկական հին գրականութեան և պատմութեան մէջ :

Յայտնի է թէ սոյն անունն յատուկ և յայտարար է այն հին նախարարական ցեղին, որ Սենեքերիմէն սերեալ կը համարուի : Արծրունիք կը բնակէին և կ'իշխէին ի բնէ մարական ¹ վասպուրականի մէջ, զոր միայն Տիգրան՝ արքայից արքայն կամ իւր նախորդներէն մին՝ միացուց տէրութեան հետ : Սոյն հարաւ—արեւելեան նահանգը միշտ իրեն առանձին գոյութիւն մ'ունեցեր է քաղաքականօրէն : Շատ վերջը, ամիրապետներու ժամանակ, երբ Հայաստան ազատեցաւ արաքացոց իշխանութենէն և հաստատուեցան բագրատունի արքայից արքայն (βασιλεις βασιλεων), ի նմին ժամանակի կ'իշխէին նաև Արծրունիք վասպուրականի մէջ՝ իբր անկախ փոքրիկ թագաւորք (reguli), զոր յոյնք՝ իշխան վասպուրականի ² կը կոչէին : Անաբաղիս Մերութան եպիսկոպոսն այլ Արծրունեաց ցեղին շառաւիղ մ'էր :

Դժբախտաբար Ագաթանգեղոսի Հայոց դարձի պատմութիւնն կը լռէ բոլորովին հարաւ—արեւելեան կողմերու մասին : Հաւանականաբար այն գաւառներուն դարձն եղեր է Ասորեց կողմէն (Ելեւսիս կամ Մծբին), շատ տեւի կիսունի քան աշխարհին միւս զիւաւոր մասն, և այսու միայն կարելի է բացատրել Մերութան եպիսկոպոսին գոյութիւնը վաղ իսկ յամին 250 .

Եպիսկոպոսաց ամենահին ցուցակն՝ զոր ունինք ձեռքերնս՝ է այն որ կը գտնուի Եղիշէի վարդապետի գրոց մէջ (Պատմ. վարդապետ, ևն, հրատ. ի վիենետիկ, 1893) յամին 450 . Եպիսկոպոսաց թիւն բարձրացեր է 17ի (ի միասին առած նաև կաթողիկոսը), մինչև՝ Ագաթանգեղոսի գրոց մէջ միայն 12 հատ ³ կը յիշուին : Վասպուրական աշխարհին կը պատկանէին չորս հետեւեալքն .

Ա. Եպիսկոպոսն Մարգաստանի,

Բ. Եպիսկոպոսն Արծրունեաց,

1. Καὶ τοὺς κατὰ Ἀρμενίαν ὁσούτους περὶ μεταβολὰς ἐπιστέλλει ὢν ἐπισκόπος Μερουζάνης .

2. Armeniæ utique minoris potius quam maioris, adeoque Sebastæ metropolis sæculo tertio medio episcopus erat Meruzanes. (Le Quien, O. Chr. I, 419).

1. Որ կը պատկանէր Ասորպատեն—Ասորպատականի :

2. Ἀρχὸν Βασιπαρακλὰ (Constant. Porph. III, 187, 15), և կամ, ἄρχων τοῦ Ἀσπουρακλὰ ἡγευ τοῦ Βασιπαρακλὰ (Constant. Porph. I, 687, 4).

- Գ. Եպիսկոպոսն Ռշտունեաց,
Դ. Եպիսկոպոսն Անձեացեաց:

Տարակոյս չի կայ թէ Դ դարուն մէջ տա-
կաին զոյութին շունէր Ռշտունեաց եպիս-
կոպոսական թեմն, որովհետեւ Ս. Յակովբայ
մօթնացոյ ժամանակ դեռ բոլորովին հեթա-
նոս էին նոյն գաւառին բնակիչք. հաւանա-
կանաբար յառաջն բոլանդակ նահանգին մէջ
մէկ եպիսկոպոս միայն կայր, և սա էր ճիշդ
Մերութանն:

Ապա կրնանք հետեցունել՝ թէ այս 17
եպիսկոպոսներէն

1) 12 հատը հաստատեր է նոյն ինքն
Ս. Գրիգոր,

2) 4 հատ վասպուրականի եպիսկո-
պոսունք էին,

3) իսկ մէկն այլ հեռաւոր գաւառի մի
եպիսկոպոս էր (թեքնա Մոկաց):

Սակայն աւելի մանրամասն քննութիւն
մի կը ցուցընէ, թէ շատ սխալ է սոյնպիսի
կազմութիւն մի: Աշխարհագրորէն 13 կայուն
եպիսկոպոսունք այս կերպով կը բաժնուին.

Ա. ԱՅՐԱՐԱՏ

- 1 Բագրևանդ,
- 2 Բասեն,
- 3 Վանանդ,
- 4 Ամատունիք:

Բ. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

- 5 Տարոն,
- 6 Մանազկերա,
- 7 Բզնունիք,
- 8 Տուրուբերան,
- 9 Մարգ-Աղի,
- 10 Ապահունիք:

Գ. Եպիսկոպոսը
ամբողջ նահանգաց.

- 11 Տայք,
- 12 Մուշիք,
- 13 Մուրք:

Ինչպէս կը տեսնուի, կատարեալ ցուցակ
մի չէ սա հայ եպիսկոպոսաց, բնականաբար

կը պակսին հոռիմէական Հայաստանի, ուստի
և յետին Դ Հայոց և Բարձր Հայոց եպիս-
կոպոսունք: Այս վերջին նահանգին պալով,
ի թէ ողորոշուպոլիս (ի Եպրին) ստոյգ է թէ
յամն 428 և 451 կային եպիսկոպոսք, յԵ-
կեղեաց (Κελεσίν) յամին 459, իսկ Դա-
րանաղեաց գաւառին մէջ միայն 680ին.
սակայն ամենեւին տարակոյս չի կայ թէ այս
պարզաբար պատահական է:

Հարաւային մասին գալով՝ «Արսարիոս
Ծոփացի», որ կը յիշատակուի Նիկիոյ ժողո-
ւոյն զործոց լատիններէն պատմութեան մէջ,
Ծոփաց աշխարհին եպիսկոպոս եղած է. այլ
աղաւաղեալ ազգաժողովն կը պակսի յոյն,
ղպահ և ասորի աեղեկագիրներուն մէջ: Ըստ
ինքեան զժուարին է կարծել, թէ Արսա-
րիոս անունն աղաւաղում մի լինի Արիստա-
կիսին: Եպրելի է ցուցընել թէ Հանձիտի և
Բաղահովտի մէջ ևս եղեր են եպիսկոպոս-
ներ — այլ հաւանականաբար պատահամամբ —
միայն յետին ժամանակի մի մէջ: Յովհանն
Մամիկանեան ևս կը յիշէ Հաշտենից գա-
ւառին եպիսկոպոս մի, այլ այս ստացոյց պատ-
մագրիս վերայ կարելի չէ վստահիլ: Դ Հայոց
կը պատկանի նաև Արշամուշատ կամ Արսա-
մոսատ (հ. Սլանուատ), որուն եպիսկոպոսք
դեռ 2 դարուն մէջ ասորիք էին¹:

Փառաւոտ (գրեթէ 365ին ժամանակները)
կը յիշատակէ Աղձնեաց և Կորդուաց եպիս-
կոպոսներ պարսկահայոց մէջ: Ինչպէս կ'ե-
րևի, եպիսկոպոսաց թիւն շատ աճեր է այն
երկրք ժամանակին մէջ, որ է՝ Լուսաւորի
ժամանակէն մինչև Ս. Սահակայ մահը (439):

1. Հայկական եկեղեցւոյ վերայ ասորեաց ըրած ազ-
գեցութեան մասին նմոտ. J. Strzygowsky, Das
Etschmiadzin - Evangeliar S. 81, որ սակայն՝ հա-
կառակ զիտեական գրութեան՝ կը գործածէ նաև Զենոբ
Գլաղէ:

Հ. Յովհ. Վ. Թորոսեան

